

# ԴԻՄԱԾՆՈՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Վնասվածքը արտաքին միջավայրի գործոնների ազդեցությամբ օրգանիզմի որևէ հյուսվածքի ամբողջականության խախտումն է և դրանով պայմանավորված ֆիզիոլոգիական գործընթացների խանգարումը: Մանկական ստոմատոլոգիայում բավականին հաճախ են առնչվում երեխաների դիմաձևն ու տային շրջանի վնասվածքներին: Տեղակայվելով բերանի խոռոչում՝ դրանք զգալի անհանգստություն են պատճառում երեխաներին, նրանց ծնողներին կամ խնամակալներին: Վնասվածք ստացած երեխային պետք է խնամքով զննել, ճիշտ գնահատել վնասվածքի ծանրությունը և բուժման ծավալը, որի հետևանքով շատ անգամ պարզվում է, որ գործերն այնքան վատ չեն, ինչպես թվում է առաջին հայացքից: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ վնասվածքի հետևանքները ոչ միայն սպառնում են ատամի կամ հարակից հյուսվածքների առողջությանը, այլև կարող են առաջացնել դեմքի և ծնոտների այնպիսի թերություններ, որոնք կազդեն տուժածի կյանքի որակի վրա, և նա ընդմիջտ ստիպված է լինելու ստոմատոլոգիական բազմազան ու բազմապիսի բուժումներ ստանալու:

### Վիճակագրական տվյալները

Երեխաների դիմաձևն ու տային շրջանի վնասվածքները ընդհանուր վնասվածքների 6-13%-ն են: Մանկական դիմաձևն ու տային վիրաբուժության բաժանմունքներում վնասվածքների պատճառով հոսպիտալացված հիվանդների քանակը ընդհանուրի 20-30%-ն է:

Վնասվածքների տոկոսային հարաբերակցությունը ըստ տեղակայման հետևյալն է՝

- փափուկ հյուսվածքների վնասվածքներ՝ մոտ 40%, որոնց 25-30%-ը՝ վարակված,
- կարծր հյուսվածքների վնասվածքներ՝ մոտ 60%, որոնցից քթի վնասվածքները 70-80%-ն են, ստորին ծնոտինը՝ 11-17%-ը, վերին ծնոտինը՝ 7%-ը, ատամներինը՝ 5-7%-ը:

Դիմաձևն ու տային շրջանի վնասվածքների 3-30%-ն ուղեկցվում է գանգուղեղային վնասվածքներով:

Վնասվածքների բնույթը տարբեր է տարբեր տարիքային խմբերում: 3-5 տարեկանների շրջանում գերակշռում են դեմքի և բերանի խոռոչի փափուկ հյուսվածքների վնասվածքները, ավելի մեծերի շրջանում՝ ատամների, ծնոտների և դիմային գանգի ոսկրերի վնասվածքները: Շատ բնորոշ է, որ քիմիկատների, լեզվի վնասվածքներն ավելի բնորոշ են մինչև 4 տարեկան երեխաներին: Շան և այլ կենդանիների կծած վերքեր լինում են 7-15 տարեկան երեխաների

մոտ: Ծծկեր տարիքի երեխաների շրջանում երբեմն լինում են առնետի կծած վերքեր:

#### **Դասակարգումը**

Երեխան վնասվածք կարող է ստանալ տարբեր պայմաններում: Վնասվածքների պատճառներով և հանգամանքներով պայմանավորված՝ մանկական տրավմատիզմի տեսակներն են՝

1. ծննդաբերական,
2. կենցաղային,
3. ճանապարհատրանսպորտային,
4. սպորտային,
5. ուսումնաարտադրական,
6. այլ:

Կենցաղային վնասվածքները քանակով առաջին տեղում են: Ճանապարհատրանսպորտային վնասվածքներն ավելի հազվադեպ են, սակայն աչքի են ընկնում ծանրությամբ: Ծննդաբերական վնասվածքները քիչ են, սակայն կարող են թողնել ծանր հետևանքներ, որոնց դեպքում հետագայում անհրաժեշտ է երկարատև համալիր բուժում:

#### **Պատճառագիտությունը և հաճախականությունը**

Վնասվածքների մեծ մասն առաջանում է ընկնելու կամ խաղալու ժամանակ առաջացող դժբախտ դեպքերի պատճառով: Վերին կենտրոնական կաթնատամները հաճախ վնասվում են նոր քայլել սովորող երեխաների դեպքում: Ատամների վնասվածքներին նախատրամադրող գործոններն են Էնգլի դասակարգման 2-րդ դասի 1-ին ենթադասին պատկանող կծվածքը, խոր կծվածքը:

Երեխաների 30%-ը ստանում է կաթնատամների վնասվածք, 22%-ը մինչև 14 տարեկանը վնասում է մշտական ատամները: Տղաների և աղջիկների հարաբերակցությունը 2:1 է: Դեպքերի ամենամեծ հաճախականությունը արձանագրված է 2-4 և 8-10 տարեկանների շրջանում: Հիմնականում վնասվում են վերին կենտրոնական կտրիչները: Սովորաբար վնասվում է մեկ ատամ, բացառությամբ ավտոմոբիլային վթարների և սպորտային պարապմունքների ժամանակ առաջացած դեպքերի:

Երեխաների դիմաճնոտային շրջանի վնասվածքների պատճառներն ըստ հաճախականության ներկայացված են աղյուսակ 16-ում.

Մեծերի կողմից թույլ տրվող չարաշահումների՝ որպես երեխաների դիմաճնոտային շրջանի վնասվածքների պատճառի վրա ուշադրություն են հրավիրում ժամանակակից արևմտյան հեղինակները: Նրանք նշում են, որ նման դեպքերի 80%-ը բաժին է ընկնում կրտսեր տարիքային խմբի (0-5 տարեկան) երեխաներին: Նշված հեղինակները առանձնացնում են նաև այդ չարաշահումների տարբերակները՝

- ֆիզիկական,

- հոգեբանական,
- սեռական,
- արհամարհանք (աչքաթող անելը, բարձիթողի վիճակը):

Աղյուսակ 16.

<i>Պատճառը</i>	<i>%-ը վնասվածքների ընդհանուր քանակում</i>
ընկնելը	43.2
դժբախտ դեպքերը խաղալիս	17.7
դժբախտ դեպքերը ավտոմոբիլային վթարների ժամանակ	17.4
դժբախտ դեպքերը սպորտային միջոցառումների ժամանակ	8.3
շների կծելը	6.4
կռիվները և ընդհարումները	1.4
չարաշահումները մեծերի կողմից	1.0
այլ	4.0

### **Կանխարգելումը**

Երեխաների դիմաձևոտային շրջանի վնասվածքների կանխարգելումը ներառում է համալիր միջոցառումների համակարգ, որն ունի չընդհատվող բնույթ՝

- սանիտարալուսավորչական աշխատանք երեխաների ծնողների, խնամակալների կամ դաստիարակների հետ,
- երեխաների դաստիարակություն,
- երեխայի լինելու տեղի իմացություն,
- խաղերին տալ առավելապես կազմակերպված բնույթ՝ մեծերի հսկողությամբ,
- հեծանիվ, անվավոր չմուշկներ, սքեյթբորդ վարելիս սաղավարտ դնել,
- ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնների իմացություն,
- անվտանգության կանոնների պահպանում ուսումնասարտադրական գործունեության ժամանակ: